ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 ապրիլի 2026 թվականի թիվ 70 – Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԻՋԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ «ՏՆԱՄԵՐՁ ՀՈՂԱՄԱՍԵՐՈՒՄ ԱՅԳԵՀԻՄՆՄԱՆ ԵՎ ՈՌՈԳՄԱՆ ԱՐԴԻԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՆԵՐԴՐՄԱՆ ՓՈՐՁՆԱԿԱՆ ԵՐԿՐՈՐԴ» ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ԿՈՂՄԻՑ ԿԱՏԱՐՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԸՆԹԱՑՔԻ ԵՎ ՈՐԱԿԻ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՈՒՄԲ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2025 թվականի հունիսի 12-ի N 780-Լ որոշմամբ հաստատված «Տնամերձ հողամասերում այգեհիմնման և ոռոգման արդիական համակարգերի ներդրման փորձնական երկրորդ» ծրագրի 24-րդ կետը՝

ո ր ո շ ու մ եմ.

1. Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Իջևան համայնքում «Տնամերձ հողամասերում այգեհիմնման և ոռոգման արդիական համակարգերի ներդրման փորձնական երկրորդ» ծրագրի շրջանակներում կապալառուի կողմից կատարվող աշխատանքների ընթացքի և որակի համապատասխանության ուսումնասիրության նպատակով ստեղծել մոնիթորինգի աշխատանքային խումբ՝ համաձայն կից հավելվածի:

2. Աշխատանքային խմբին՝ կապալառուի կողմից կատարվող աշխատանքների ընթացքի և որակի համապատասխանության ուսումնասիրության նպատակով կատարել այցելություններ՝ յուրաքանչյուր շահառուի տնտեսությունում ամիսը 2 անգամ հաճախականությամբ և համապատասխան տեղեկատվություն ներկայացնել Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարություն:

ՓՈԽԱՐԻՆՈՂ ՏԵՂԱԿԱԼ ԱՐԹՈՒՐ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ

Ստորագրող
ԱՐԹՈՒՐ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ
3702620249

2026-04-15 12:08:50 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

Հավելված
ՀՀ Տավուշի մարզպետի 2026 թվականի
ապրիլի 15-ի թիվ 70 - Ա որոշման

ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՄԲԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԸ

Վաղարշակ Սուքոյան - նախագահ, ՀՀ Տավուշի մարզպետի աշխատակազմի գյուղատնտեսության և շրջակա միջավայրի պահպանության վարչության պետ

Արկադի Ամիրխանյան - ՀՀ Տավուշի մարզպետի աշխատակազմի գյուղատնտեսության և շրջակա միջավայրի պահպանության վարչության գլխավոր մասնագետ

Անդրանիկ Խաառատյան - Իջևանի համայնքապետարանի քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի պետի տեղակալ

Անդրանիկ Վիրաբյան – Իջևան համայնքի Խաշթառակ բնակավայրի վարչական ղեկավար

Իսկանդար Մեհրաբյան – Իջևան համայնքի Ծաղկավան բնակավայրի վարչական ղեկավար

Տիգրան Հարությունյան - Իջևան համայնքի Բերքաբեր բնակավայրի վարչական ղեկավար

Կամո Շահինյան - Իջևան համայնքի Կիրանց բնակավայրի վարչական ղեկավար:

ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ Ա.ԳԵՎՈՐԳՅԱՆ

15.04.2026

X

ԱՐՄԱՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Signed by: GEVORGYAN ARMAN 2412760241